

գեղի. նախ սրբասէր Մէլիք աղին. որ ի հասակս երեք տարի. փոխի առ տէրն իւր ցանկալի: Ապա երկրորդ եղբայր սորին, Խօջայ Ֆռանդուլն գովելի. նաեւ երրորդ եղբայր սորին. Խաւջայ Սուլթանն բաղձալին. եւ Ջալալ Բէկն սասցող սորին. կրտսերագոյն քան զնոսին. բայց հանձարով լի ւ անթերին. ստատամիտ յոյժ գովելին: Այլ եւ պապուն իւրեանց մեծին. իշխանաշուք Աղա Խաչկին. իւրեանց հանիկն հեղահողին. խոնարհամիտ Մարիամին: Եւ հաւերկրայր Ջալալ Բէկին: Պարոն Նազար մեծ Խաւջային. այլ եւ Պարոն Սինան Բէկին, որ վաղճանի տղայ հասակին: Այլ եւ որդիք Մէլիք աղին. Պարոն Մուքէյլն ընդ Խաչկին. Սինան Խաչուճն Սոլթանիպաշէն, մնան անփորձ հաղթից չարին: Նոյն եւ որդիքն Ֆռանդուլին. Բարայն ընդ Մէլիքնիաղին. Մուսէս Մուչումն ընդ Մարիամին. յերկար ամօք ոչ սասանին: Այլ եւ որդիք Սուլթանուճին. Սաֆար Վալաթն ընդ Լէլումին. լիով աւուրբք սաղէն աճին, մինչեւ որ զորդիս որդոց տեսցին: Զոր եւ տացէ տէր Ջալալին բարի որդիք ընդ դստերին. որդիս ազնիւ եւ զուստր նորին. որ Սզուհի վերածայնին: Իսկ Տէր Աստուածն ամէնայնի պահէ զսա թիւնից չարին, եւ յետ աստեացս ամէնայնին արքայութեան որդիք լինին»:

Յիշատակարանը, ինչպէս կը տեսնենք, Խօջայ Սաֆարի ընտանեկան սերնդաճիւղին համար մեծապէս արժէքաւոր է: Նոյն ատեն առ այժմ ես դիտել կուտամ, որ ըստ սոյն յիշատակարանին Խօջայ Սաֆարէն եւ Խօջայ Նազարէն զատ Խօջայ կամ Աղա Խաչիկ ունեցած է ԵՐՐՈՐԴ որդի մըն ալ՝ «Պարոն Սինան Բէկ», «որ վաղճանի տղայ հասակին»: Այս Սինան Բէկը կը յիշուի Բերտանական Թանգարանի թիւ 8 ձեռագրին մէջ ալ: Տէր Յովհաննեանց յանուանէ իսկ չի յիշեր զայն: Կ'երեւայ թէ անոր վաղահասակ մահը զինքը զրկած է պատմութեան մէջ յիշատակութիւն մը ձգելէ:

Խօջայ Սաֆարի կենսագրութեան մասին շատ բան մը չունիմ ըսելիք: Առ. Դաւրիթեցի Ս. Հոսիփիմէի Նշխարաց Գիւտին եւ Գողութեան մասին խօսած ատեն կը պատմէ թէ եւ

Սաֆար եւ Նազար բաւական խոնուած են զործին: Դաւրիթեցիի համաձայն, Դաւրիթ կաթողիկոսը ուրիշ երեւանցիներու հետ, որոնք Սպահան կը գտնուէին, «ի միասին զնացին ի մէջ Զուղայեցոց առ Խօջայ Սաֆարն՝ որք կային ի ներքոյ թաղաւորութեանն Պարսից. քանզի յոյժ ընդունելիք էին Խօջայ Սաֆարս՝ եւ եղբայրն իւր Խօջայ Նազարն առաջի Պարսից թաղաւորին եւ իշխանացն նորա, եւ ծանուցին Խօջայ Սաֆարին զայն զործ: Եւ Խօջայ Սաֆարն՝ եւ կաթողիկոսն՝ եւ տղայ տէրատէրն, որ էր աւագ՝ երեւանցոց, ի միասին զնացին առ քաղաքապետն՝ որում անունն էր Միրզայ Մահմատ, զոր շահն կարգեալ էր քաղաքապետ Ասպահանու, վասնզի շահն ոչ էր Ասպահան յայսմ ժամանակիս, այլ ի Թարվէզ էր, նաեւ Խօջայ Նազարն եւս անդ էր առաջի շահին: Եւ յետ ծանուցանելոյն քաղաքապետին՝ առեալ զօրականս ի նմանէ զնացին յանկարծակի ի վանքն Փռանկաց՝ եւ բացեալ դասացեալ տան զուսն՝ զտին զսնդուկն նշխարովն: Եւ առեալ բերին զնշխարալի սնդուկն առ քաղաքապետն, եւ նա կնքեալ է զսնդուկն իւրով մատանեալն եւ տուեալ զԽօջայ Սաֆարն յաւանդ՝ առ ի պահել զնա մինչեւ ցզալն շահին եւ ի խնդրել զնա»:

«Զայս ամենայն զործոց անցուածք եւ որպիսութիւնք Խօջայ Սաֆարն եւ Դաւրիթ կաթողիկոսն զրով ծանուցեալ են Խօջայ Նազարին՝ որ էր ի Թարվէզ»<sup>5)</sup>

Հաւանաբար ինքն է Խօջայ Սաֆար Զուղայեցին, որ կը յիշուի 1611-ին Երուսաղէմի վանքին պարտքը վճարողներուն կարգին<sup>6)</sup>:

Նպատակ չունիմ Ս. Հոսիփիմէի նշխարներուն այս գիւտով եւ զողութեան պատմութեամբ զբաղիլ հոս, ուստի մեր նիւթին եւ Սաֆարի կենսագրութեան հետ կապ չունեցող մասերը զանց կ'ընեմ: Սակայն, հոս պիտի ըսեմ, որ Խօջայ Նազարի ներկայացուցիչ Աւետիք Ալթուն կ'երթայ Նախչուանու Ապարան-

5) Պատ. Դաւրիթեցոյ:— էջ 186-187:  
 6) Պատ. Երուսաղէմի.— Սաւալանեանց: 1931, Երուսաղէմ. Բ. հատոր, էջ 569: